# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-5-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-2022/ԲԱՇԱ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 5 | կիսավերարկու | կիսավերարկու | կիսավերարկու | Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ | Մուգ փիրուզագույն անջրանցիկ կտորից 100% նեյլոն կամ նույնատիպ, ջրայուղաանդրադարձնող ծածկույթով, կտորի ներսի կողմից մեմբրանե ծածկույթ: Քաշը 1մ2 170 գ: Կիսավերարկուն բաղկացած է լանջափեշերից, թևքերից, հետ ծալվող օձիքից: Կիսավերարկուն մինչև գոտկատեղը ձգվող գոտիով և տաք ներդիրով է: Կիսավերարկուին կոճկվում է հանովի արհեստական մորթե օձիք, որը կոճկվում է 5 օղակներով և բաճկոնի օձիքին կարված 5 հատ 15մմ տրամագծով |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | պլաստմասե կոճակներ: Կիսավերարկուի գոտու կողային մասերը ունի 12-18 սմ երկարությամբ առանձգական ժապավեն: Կոճկվում է կափույրով ծածկվող սև գույնի շղթայով և կպչունակով: Թիկունքը՝ վերին կտրվածքով, կարմիր եզրաքուղով: Լանջափեշերի ներքևի մասում թեք ներկարված գրպաններ: Առջևի 2 լանջափեշերի վերևամասում կարմիր եզրագծով կափույրի տակ ներկարվում են շղթայով փակվող գրպաններ: Թեզանիքը առանձգական ժապավենով, ձախ կողմում ծոցագրպան: Ձախ գրպանի վերևի մասում կարմիր եզրաքուղից 70 մմ բարձրության վրա կարված է կտորից օղակ կրծքանշանի համար, 20 մմ երկարությամբ, 10 մմ լայնությամբ: Առջևի աջ գրպանի վերևի մասում ամրացվում է ««ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ»» մակագրությամբ կտոր, թիկունքին ««POLICE»» մակագրությամբ կտոր: Աստառը՝ մուգ փիրուզագույն, քաշը առնվազն 70գր մ2: Ձախ թևքի ուսամասից 60 մմ ներքև կարվում է Հայաստանի Հանրապետության |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ոստիկանության թևքանշան, որը պատրաստվում է գունավոր գործվածքից: Ուսադիրները՝ սև կտորից, կիսավերարկուի չափսի համապատասխան երկարությամբ և 45 մմ լայնությամբ: Կիսավերարկուների չափսերն են 46-ից մինչև 62 չափսը: Փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ մեծ պարկով, որի մեջ տեսականին 5 հատ՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 հատ: Պարկերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Անհրաժեշտության դեպքում պատվիրատուի պահանջով տրամադրվում է լաբորատոր ստուգման եզրակացությունը: Նմուշը և չափսերը համաձայնեցնել պատվիրատուի հետ: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-5-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-2022/ԲԱՉԱ ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 5 | | | | | |